

ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ ԵՒ Գ. Վ. ԱՅՎԱԶՈՎՍՔԻ

Ազգային մեծ դէմքերի մահից յետոյ յաճախ ծնւռռմ են նրանց անուան շուրջ առասպելներ։ Մանաւանդ այդպէս է եղել այն դէպքերում, երբ այդ դէմքերը պաշտամունքի առարկայ են դարձել ժողովրդի լայն խաւերի կողմէց։ Հէնց այդ լայն խաւերն են, որ ընթից բերան պատմելով ու յիշելով հանգուցեալի կեանքը եւ մեկնարանելով անյայտ մնացած կողմերը — անգիտակցար մինչեւ առասպելի մեծութեան են հասցնում մեռնողի կեանքի այս կամ այն դէպքը։ Առասպելներ են յօրինուած մի Գարիբալդիի, մի Դանթօնի, մի Միուարոյի հետ պատահած դէպքերի կամ նրանց յայտնած մտքերի շուրջը։ Այդպէս պատահեց եւ անցեալ դարու կէսերին մեր խոշոր ազգային դէմքերից մէկի հետ — Միքայէլ Նալբանդեանցի մահից յետոյ։

Երբ 1862 թ. Մ. Նալբանդեանց ձերբակալուեց, ու երեք տարի բանտարկուելուց յետոյ — Ռուսաստանի խոռ ու հեռաւոր քաղաքներից մէկում վախճանուեց — նրա դադաղը բերուեցիր հայրենի Ն. Նախիջեւանը եւ այնտեղ հողին յանձնուեց։ Բայց հազիւ դադաղը հողով էր ծածկուած, երբ լուր տարածուեց, թէ Մ. Նալբանդեանցը չէ մեռած, ու թաղուած է մէկ ուրիշ մարդ, իսկ ինքը Նալբանդեանցը փախել է

արտասահման։ այդ լուրը շուտով ըստացաւ եւ այլ ձեւեր, թէ իրը նա պիտի վերադառնայ որպէս «Հայ թագաւոր» ու հայ գիւղացիներին հող պիտի բաժնէ, եւն. միւս կողմէից տարածուել էր եւ այլ լուր, թէ իրը Մ. Նալբանդեանցի բանտարկութեան պատճառը եղած է նոյն ժամանակների նրա ոխերիմ հակառակորդի Գարրիէլ վարդ։ Այլովովսքու մատնութիւնը, որ արել էր վարդապետը Ռուս թագաւորին, բնուրոշելով Նալբանդեանցին որպէս «հակակառավարչական ու ապստամբ»։

Այս վերջի կարծիքը (իսկ շատերի համար եւ համոզմունքը) այնքան արմատացել էր հայ հասարակութեան տարրեր շրջաններում — տասնեակ տարիների ընթացքում, — որ երր 1878 թ. Գ. Վ. Այլազովսքին կջմիածնի Գէորգեան ձեմարանի տեսուչ էր նշանակուած՝ ձեմարանի սաների մէջ բողոքի ձայներ լսուեցին. այդ բողոքը շուտով լրդաւ, որպէս առաջի աշակերտական ապստամբութիւն տեսչի դէմ, եւ ձայներ լսուեցին «չենք ուզում մատնիչ տեսուչ...»։

Ու 66 տարեկան եւ արդէն եպիսկոպոս Գարրիէլ Այլազովսքին ստիպուեցաւ հրաժարիլ տեսչական պաշտօնից ու թիֆլիս հեռանալ։

«Մատնութեան փաստը» այնքան էր ամբացած վաթսունական թուականների հայ մտաւորական շրջաններում, որ այդպէս էին կարծում եւ՝ Պոլսի «Մեղու»ի եւ՝ Զմիւռնիայի «Ծաղիկ»ի եւ՝ Մոսկուայի «Հիւսիսափայլ»ի եւ՝ Թիֆլիսի «Մեղու Հայաստանի»ի ընթերցողներն ու բարեկամները։ Բայց զարգանալի՛ րան։ նոյն իսկ Գ. Վ. Այվազովսկու համախոհները (Խալիպականները) չէին հերքում այդ «փաստ»ը, թէեւ բոլորովին ուրիշ նպատակից գրգռուած։ Խալիպականները ուզում էին ամբացնել ոռւսահայ հասարակութեան մտքում այն համոզմունքը, որ յիբաւի Գ. Վ. Այվազովսկին մեծ կապեր ունի ոռուապետական բարձր շրջաններում եւ «նըրան հակառակիլը կարող է ամեն մէկ Հային բանտարկութեան կամ Սիրիք քշուելու վատանգին ենթարկել . . . : Ինքը Գ. Վ. Այվազովսկին սկզբում շատ թոյլ հերքումներ արաւ, թէ նա չի եղած Մ. Խալրանդեանցի ձերակալման պատճառը, ու շուտով լոեց։ «Մատնութեան» հարցը մամուլի մէջ չէր կարող արծարծուիլ ուզգակի, որովհետեւ հարցը քաղաքական բնոյթ էր ստացել, զրաքըննական պայմանները չէին թողնում այդ անել եւ բացի այդ՝ ո՞վ կը կամենար այդ անհաւասար կուռմ բոնել «պետական յանցաւոր»ի (Մ. Խալրանդեանցի) կողմը, ու միւս կողմից «պետութիւնից նշանակուած առաջնորդ»ի հետ բանկուի մէջ մտնել. ոչ ոք իր «սաղ գլուխը աւետարանի տակ դնելը չէր ուզում եւ չէր համարձակում, ինչ որ բացարում են այն ժամանակները։ Որ Գ. Վ. Այվազովսկին վաթսունական թուականների սկզբներում գրած է եղել մի քանի «զաղանի թղթեր» ներքին գործոց նախարարին - «Հիւսիսափայլ»ի ու Մ. Խալրանդեանցի գէմ - դա փաստ էր.

բայց թէ այդ ամբաստանութիւններն են եղել արդեօք մեր մեծ հայրենասէրի ձերբակալման պատճառը - դա ուրիշ հարց է։ Բայց նախ քանի այդ հարցին զալը պէտք է մի քանի խօսք ասենք Մ. Խալրանդեանցի ու Գ. Վ. Այվազովսկու բանակուուի ու թշնամութեան մասին։ Յիսուսի ծիսունական թուականներում Ն. Խախիջեւանի հասարակութիւնը հաշիւ էր պահանջում այն եկեղեցական եւ հասարակական փողերի, որ տաս տարիներէ ի վեր զանձել էր քաղաքակալութիւն եւ եկեղեցիների ընդհանուր զանձապահ Յ. Խալիպեանը։ Ու երբ ներսէս կաթողիկոսից յետոյ ընտրուեց Մատթէոսը, նոր կաթողիկոսը ուղարկեց Խալրանդեանցն իրը յանձնաքննիչ որը տեղացիների օգնութեամբ պարզեց զումարը, որ պէտք է վերադարձնէր Խալիպեանը։ Այդ գումարը Ն. Խախիջեւանցիք մտագիր էին յատկացնել Հայկական ձեմարանի բացման իրենց քաղաքում։ Այդ ժամանակներն է որ միջամտում է այդ գործի մէջ, անցնում է Խալիպեանի կողմը եւ գործին բոլորովին այլ ընթացք է տալիս Գ. Վ. Այվազովսկին (Ն. Խախիջեւանի ու Բևսարարիոյ թեմի առաջնորդի տեղակալ նշանակուած ոռու կառավարութեան կողմից)։ Գ. Վ. Այվազովսկին անձանոթ գէմք չէր Նախիջեւանցիների համար։ Ծնուած Ղրիմի թէողոսիա քաղաքում ու կրթութիւն ստացած Վենետիկի Սր. Ղաղարու վանքում, Գ. Վ. Այվազովսկին մինչեւ 1851 թ. տեսչի պաշտօն էր վարում Փարիզի Մուրատեան վարժարանում եւ նոյն քաղաքում մինչեւ 1856 թ. «Մասեաց Աղաւնի» պատկերազարդ Հայերէն եւ Փրանսերէն հանդէսն էր Հրատարակում։ Անցեալում Գ. Վ. Այվազովսկին յայտնի էր նոյնպէս եւ որպէս Բագրատէպի լսմբագիրներից մէկը, հմուտ

դրաբարագիտ, նոր լեզուներին լաւ ծառ-
նօթ, եռանդուն, բայց կրքոտ ու դիւ-
րագրդիս մարդ: Գ. Վ. Այվազովսքին
գժտուել էր Մխիթարեանների հետ եւ
յիսունական թուականների կէսերին
թողել էր կաթոլիկութիւնը եւ ընդունել
լուսաւըշականութիւն: Գալով մու-
ռասուան՝ Գ. Վ. Այվազովսքին, առանց
ազատելու նոր կաթողիկոսի ընտրու-
թեան, յաջողած էր՝ չնորհիւ իր կատե-
ղին՝ Առաջնորդի ահջակալ նշանակուիլ
ուստ ներքին գործոց նախարարութեան
չաղմից: Եյդ քայլը շատ զարմացնում
էր վրանիցեցնում է թէ՛ հայ հասարակու-
թէնը եւ թէ՛ նոր կաթողիկոսին, որով-
հետև թէմի առաջնորդը կաթողիկոսի
ստուգոց ընտան էր եւ պէտք է որ սպասէր
համբարձիկասի համաձայնութիւնը ու
այսուհետեւ ստանձնէր իր պաշտօնը:

Աւելին եւս, Գ. Վ. Այվազովսքին
համոզում է Խալիսկեանին՝ վերադարձ-
ուելիք եկեղեցական փողով ոչ թէ Ն.
Նախիջեւանում, այլ Դրիմի թէողոսիա
փոքրիկ քաղաքում բանալ «Խալիսկեան
վարժարան» ու իրեն Այվազովսքուն էլ
տեսուչ նշանակել այդ վարժարանին:
Նա կարողանում է համոզել նոյն Խալի-
սկեանին, որ վարժարանը ունենայ իր
սպարանը ու վարժարանի եկամուտից
հրատարակուի մի առ ժամանակ դա-
դարած «Մասեաց Աղաւնի» ամսագիրը:

Բնական է, որ այդ բոլորը Ն. Նա-
խիջեւանի յառաջադէմ մտաւորական-
ները գտնում էին ապօքէն եւ պախարա-
կելի: Սրանց մտքերի արտայայտիչն
էր «Հիւսիսափայլ»ը յանձին Ա. Նա-
գարեանցի եւ մանաւանդ Մ. Խալրան-
դեանցի: Իր ժամանակին հրապարա-
կագրական բանակուրը ստացել էր
խիստ եւ սուր կերպարանք: Դէմ առ
դէմ կանգնած էին երկու խոչոր դէմ-
քեր, օժտուած բնածին տաղանդով. Եր-

կուսն էլ ուժեղ կամքի տէր, երկուսն էլ
հայկարան ու լեզուագիտ, երկուսն էլ
գրչին հմուտ, բայց մէկը՝ Նալրան-
դեանցը՝ սուր, կրակոտ, հարուածող
գրչով, յառաջադէմ եւ «աշխարհաբար-
եան», «այրուող իր ներքին կրակով».
միւսը, Այվազովսքին, «գրաբարեան»,
աւելի ճկուն, միջոցների առջեւ կանգ-
չանող, կառավարութեան կողմից «ա-
ռաջնորդ նշանակեալ» եւ կառավարու-
թեան հաճոյ ու պահպանողական գա-
ղափարների մարդ: Բարոյապէս եւ մը-
տայնութեամբ երկու խառնուածքները
հակունեաներ էին. հանրային եւ գրա-
կան բանակուրի տեսակէտից յաղթու-
թիւնը թեքում էր Նալրանդեանցի կող-
մը(*) որովհետեւ նա հիմնւում էր իր
համաքաղաքացիների արդար պահան-
ջի վրայ, կաթողիկոսի իրաւասութեան
սկզբունքի վրայ, այլ եւ կատարեալ ան-
շահախնդրութիւնից դրդուած: Բայց
փաստօրէն եւ վերջին հաշուով՝ Գ. Վ.
Այվազովսքին յաջողում էր անել եւ ի-
րագործել այն ամենը ինչ ծրագրած էին
ինքը եւ Խալիսկեանը. Էական ոյժը նը-
րանց կողմն էր, նախ՝ Խալիսկեանի նիւ-
թական մեծ կարողութիւնը, ապա եւ
այն պաշտպանութիւնը որ նա ունէր
կառավարչական պաշտօնեաների շար-
քերում . . . :

Այդ շրջանին է, երբ Մ. Նալրան-
դեանցը իմանում է, որ Գ. Վ. Այվա-
զովսքու խնդրանոք՝ ուսւ գրաքննչա-

(*) Բացի Մոսկուայի «Հիւսիսա-
փայլ»ից եւ Պոլսի «Մեղու»ից, Այվա-
զովսքու դէմ գրում էր եւ «Արեւմուտ-
ք»ը, որտեղ արեւմտահայ ամենափայ-
լուն գրողներից մէկը՝ Ստ. Ուկան, զա-
դափարակից Մ. Նալրանդեանցին, սուր
երգիծաբանական յօդուածներ էր գրում
վարդապետին դէմ:

կան ատեանը արգիլել է Պոլսի «Մեղու»ի ներմուծումը Ռուսաց սահմանաբերը, որովհետեւ «Մեղու»ն էլ սկսել էր գրել Գ. Վ. Այլազովսքու և Խալիպեանի դէմ. այդ ժամանակներն է նոյնպէս, որ ամբաստանութիւններ են եղել գըրուած «Հիւսիսափայլ»ի ու Մ. Նալբանդեանցի դէմ. ահա թէ ինչ է զըռում Մ. Նալբանդեանցը Փարիզում իր հրատարակած «Երկու Տող» գրքոյի մէջ: «Պատուելի Այլազովսքին պատրաստում է մէր գրածների համար «Հերետիկոս» անունով մեզ վերստին մկրտելու: Մինչ արդէն նախընթաց տարիներում քանի անգամ ամբաստանուեցանք նորանից Ռուսիոյ ներքին գործոց մինիստրի առաջնորդ, որպէս անկրօն, որպէս անբարոյական, որպէս ապատամբ եւ խոլովցուցի ժողովրդեան: Պ. Այլազովսքին առաջարկում էր քաջափայլ մինիստրին Հիւսիսափայլ «վնասակար» օրագիրը գաղարեցնել եւ մեզ ձգել սաստիկ պատժի տակ, օրէնքի բովանդակ խստութեամբ: Գուցէ Պ. Այլազովսքին, հայրական հոգողութեամբ պատրաստել էր մեզ տեղի բնակութեան ներշինսկ կամ Կրասնօեարսկ... մէր ջերմութիւնը մի փոքր բարեխառնելու համար Սիրիի սառնամանիքը... (բուն առողջապահական խորհրդով...): Պ. Այլազովսքին չէ կարող ուրանալ այս իրողութիւնը. ըստ որում երկար քննութիւնք եւ գրադրութիւնք եղան մինիստրների եւ ցենզուրական ժողովի մէջ այլ եւ առաջարկվեցան հարցմունքներ... Զնայելով այս տիտուր անցածի վրայ, չնայելով որ Պ. Այլազովսքին իւր «Մասեաց Աղաւնու» մէջ ազատ է ամենայն բան գրելու, նաեւ զրպարտելու... նաեւ հայհոյելու, ըստ որում նորա գրուածքը չեն քննվում ցենզուրական (գրաքննչական) ժողովի մէջ, միւս

կողմից մէր բոլոր գրուածքը քննվում են մանաւանդ խիստ, եթէ յարաբերութիւն ունին Պ. Այլազովսքին (ազացոյցները մէր ձեռքում պակաս չեն), չնայելով, ասու մէնք, այս բոլորի վրայ, հրաւիրում ենք որ Պ. Այլազովսքին խօսքը բռնէ ու հրապարակ իջանէ» (*): Նոյն գրքոյի մէջ Մ. Նալբանդեանցը երեւան հանելով Այլազովսքու զանազան քսութիւնները, բնորոշում է նրան որպէս մի մարդ, որ «ամենայն հեշտութեամբ կրօնափոխ է լինում եւ որի համար ձշմարտութիւնը, օրացոյցի պէս, տարին մի անգամ փոխում է, հարկ եղած դէպքում եւ ամիսը մի անգամ... կեցցէ Լոյօլան...»: Բայց Մ. Նալբանդեանցի համախոհների եւ մտերիմների ձեռքում կային եւ մի քանի այլ տուեալներ, որոնց նրանք «կասկած չյարուցանող փաստերի» ոյժ էին տալիս:

Նախ հետեւեալը. Մ. Նալբանդեանցի ձերբակալման միւս օրը Խալիպեանը չնորհաւորական հեռազիր էր ուղարկել թէոդոսիա Գ. Վ. Այլազովսքուն, նա էլ պատասխանել էր հեռազրով Խալիպեանին փոխադարձ չնորհաւորելով եւ ուրախութիւն յայտնելով, որ «ազգի եւ պետութեան վնասակար մարդիկ ասպարէզէն հեռացուել են»: Ապա Մ. Նալբանդեանցի մտերիմ ընկեր Ան. Սուլթան - Շահի, յայտնի չէ թէ ինչպէս (*), ձեռքն էր ընկել «Նորին Մեծութեան հաւատարիմ հոգա-

(*) Մ. Նալբանդեանց «Երկու Տող» էջ, 35-36, Փարիզ, 1861. տպարան Արամեանի:

(*) Բժիշկի հօրեղբայրը զեներալ Սիմեօն Առաքան - Շահը պետական պաշտօն ունէր, գուցէ սրա միջոցով էր ձեռք բերուել նամակը:

ստակ» ստորագրութեամբ մի գրութիւն՝ ուղղուած ներքին գործոց նախարարին հետեւալ բովանդակութեամբ՝ «Հայ ազգի բանիմաց եւ լուրջ անդամները համոզուած են եղեր միշտ որ Մ. Նալբանդանցիցը, որ այժմ գնացել է Հընդկաստան Հայկական Հրիտակների հարցով՝ անկրօն հերետիկոս է եւ պետութիւնների դեմ մեր ժողովուրդը գրգռող, ապացոյց սորան - Մ. Նալբանդանցի «Երկու Տող» գիրքը, որի 22 երեսը հետեւալը կը պարունակէ՝ «... Մենք ադասակամ նուիրեցինք մեղ հասարակ ժողովրդի իրաւունքը պաշտպանելու: Պաշտպանել այն Հայի առաջորդական իրաւունքը է մեր կեանքի բուն խորհուրդը եւ նպատակը: Եւ այս նպատակին հասնելու համար չէ պիտոյ ընկրկինք ոչ բանտի եւ ոչ աքսորի առաջեւ, ոչ միայն բանիւ եւ գըրչով այլ եւ զէնքով եւ արիւնով, եթէ մի օր արժանի լինինք զինք առնուլ մեր ձեռքը, եւ մինչեւ այժմ քարոզած ազատութիւնը նուիրել եւ սրբել մեր արիւնով: Ահաւասիկ մեր դաւանութիւնը, որի մէջ տեսանում ենք ազգի փրկութիւնը»:

Ո՞վ էր ներքին գործոց նախարարին այս նամակը գրել՝ դժուար էր հաւասարէն ասել. հաւանական է, որ Այլազովսքին լինէր, բայց չատ անգամ «հաւանական»ը - դեռ իրողութիւն կամ փաստ չէ. միայն ապացուցուած փաստը անկասկածէի է, թէեւ կարող է լինել եւ ոչ «հաւանական»: Յամենայն դէպս Մ. Նալբանդեանցի համախոհների համար - ոչ մի կասկածի չէր ենթարկում, որ այս անստորագիր նամակը ուղարկուած է Այլազովսքունքով կամ հաւանութեամբ կամ Խալիպեանի ձեռքով: Բայց Այլազովսքութեամբ:

Մ. Նալբանդեանցի ձերբակալումից եւ մանաւանդ նրա եղերական մահից յետոյ՝ սուսահայ ու թրքահայ ժողովրականութիւնը այնքան ամուր համոզուած էր Այլազովսքութեամբ ու սանձգութիւններին, որ մինչեւ իսկ Մատթէոս կաթողիկոսի վըրայ ազգեց յայտնի է, որ 1865 թ. կաթողիկոսը արձակեց Այլազովսքուն նրա ժեմակալութիւնից եւ Խալիպեան դըպրոցի տեսչութիւնից: Միայն Գէորգ Դ. կաթողիկոսի օրով Այլազովսքին ստանում է եպիսկոպոսութեան աստիճան ու նշանակում Գէորգեան ձեմարանի տեսուչ, բայց ստիպւած է լինում չուտով հրաժարուիլ այդ պաշտօնից աշակերտների պահանջին զիջանելով. այնուհետեւ 1880 թ. նա վախճանում է: Մահից մի քանի ժամանակ առաջ հրատարակում է իր «Խալիպեան դպրոցի պատմութիւնը», որտեղ յամաօրէն եւ մի շարք նոր ամբաստանութիւններ ու քաղաքական բնոյթ կրող ակնարկներ է անում հանգուցեալ Մ. Նալբանդեանցի վերաբերմամբ:

Այդ գիրքը Մ. Նալբանդեանցի համախոհների աչքում մէկ անգամ եւս ամբացրեց այն համոզմունքը, որ արդարեւ Մ. Նալբանդեանցի ձերբակալման եւ ուրեմն վազահաս մահուան պատճառը եղած է Այլազովսքին:

Եւ սակայն նոր տուեալները, որ գտաւ Գ. Վ. Այլազովսքու եղբայրը, հոչակաւոր ծովանկարիչ Այլազովսքին - հակառակն էին ապացուցանում:

Այլազովսքիների ընտանիքը Ղըրիմցի էր. մեծ եղբայրը Գրիգոր Այլազովսքին - կառավարական պաշտօնեայ էր, երկրորդը - Աղէքսանդրն էր, հոգեւոր կոչումով Գարբիէլ վարդապետ), և կրտսերը - Յովհաննէս, եւրոպական հոչակ ստացած, իրեւ ծովանկարիչ:

ՄԵծանուն նկարիչը ապրում էր Պեղեր-
բուրգում - և թէ եւ հեռու էր իր եղրօր
լրագրական բանակուներից, բայց այն
հայկական շրջաններումն էր լինում,
որտեղ անվերջ խօսում ու մեղադրում
էին Գ. Վ. Այվազովսկուն «Ճանու-
թեան» համար: Այդ բոլորը այնքան
ազդել էին Յովհաննէսի վրայ, որ նա
մշտական մտահոգութեան ու թափիծի
էր ենթարկում, երբ այս կամ այն առ-
թիւ խօսք էր բացւում իր Գարբիէլ եղ-
րօր մասին: Նկարիչ Այվազովսկին սիր-
ուած եւ շոյուած էր Ռուսաց կայսրնե-
րից Աղէքսանդր Բ. ից եւ նրա որդի Ա-
ղէքսանդր Գ. ից - նա ստացել էր «իսկա-
կան գաղտնի խորհրդական»ի մեծ աս-
տիճանը կառավարութեան կողմից եւ
«ժառանգական ազնուականի» կոչում,
ունէր մեծ կապեր նախարարների շրր-
ջանում, հարուստ էր եւ եւրոպական
հոչակ ստացած: Նկարիչը վճռում է
ի մօտոյ ծանօթանալ, անձամբ տես-
նել այն թղթերը, որոնք պահուած էին
ոստիկանական նախարարութեան ար-
շիվում եւ որոնք կոչում էին «Մ. Նալ-
րանդեանցի եւ արտասահմանեան պը-
րոպագանտիստների գործը»: Այդ վա-
ւերաթղթերին, հարցաքննութիւններին,
պաշտօնական մեղադրանքներին շատ
զժուար էր մերձենալ ամեն մի մահկա-
նացուի համար, եթէ նա չունէր իր ձեռ-
քում ներքին գործոց նախարարի յա-
տուկ թոյլաւութիւնը: Մեծ զժուարու-
թիւններից ու երկար տարիներից յե-
տոյ նկարիչ Այվազովսկուն վերջապէս
թոյլաւութիւն են տալիս այցելել «քա-
ղաքական յանցաւորների» արշիվը,
բայց այն յատուկ պայմանով, որ նա-
ինչ որ կարգայ պահէ միայն իր համար
եւ ոչ մի գէպքում ուրիշին չտայ եւ մա-
նաւանդ հաստարակութեան չենթարկէ:
Ու հոչակաւոր նկարիչը սկսում է ծա-

նօթանալ ու վնասուել հարիւրաւոր կըն-
քուած ձեռագիր կապոցների մէջ այն
տեսրակներն ու այն «կօսիէ»ները, ո-
րոնք յարաբերութիւն ունէին «ամրաս-
տանեալ Նալրանդովի գործ»ին:

Նկարիչ Այվազովսկուն թոյլաւուր-
ուած էր քաղաքական դիւանատան մէջ
պարապել շաբաթը մի անգամ երկու
ժամ, եւ քանի որ նկարիչի տարիքը մօ-
տենում էր եօթանասնի եւ յաճախ հի-
ւանդանում էր, նրա հետախուզումները
այդպիսով շարունակուում էին շատ ա-
միսներ: Բայց վերջապէս նա յաջողում
է գանել եւ կարդալ Մ. Նալրանդեանցին
վերարերեալ բոլոր թղթերը. իսկ մի
քանիսներից նա ընդօրինակում է մանա-
ւանդ հետաքրքրական կամ անհրաժեշտ
կարծուած տուեաները եւ փաստերը:

Այդ թղթերի մէջ, որոնց վրայ ար-
դէն երեսուն տարիների վոշին հաստ
շերտերով ամրացած էր - հոչակաւոր
նկարիչը գտնուում է ի մեծ զարմանս՝
շատ աւելի փաստեր, քան թէ կարծում
էր եւ յուսով էր գանել...

«Բայց ի՞նչորէս անել, որ հայ հա-
սարակութիւնն էլ ծանօթանայ Մ. Նալ-
րանդեանցի ձերբակալման իսկական
պատճառների հետ եւ հանգուցեալ եղ-
րայրը մաքրուի Մեհրուժանին վայել
արարքէն. սոյն այդ տեսակ մտքերը
անվերջ զրադեցնում էին նկարիչին:
Երկար մտածումներից յետոյ վերջա-
պէս ելքը գտնուում է:

1895 թուականի մարտ ամիսն էր:
Խրիմեան Հայրիկ, որպէս կաթո-
ղիկոս Ամենայն Հայոց, վճռել էր ու-
ղեւորուել Պետերբուրգ Ռուսաց կայսրի
հետ տեսակցութեան նպատակով եւ
ճանապարհին հանդիպել էր Ն. Նախի-
ջեւան. Խրիմեանը այնտեղ սպասում
էր, մինչեւ որ մայրաքաղաքից ստանայ
կայսրին այցելութեան թոյլաւութիւ-

նը. Խրիմեան մնաց Ն. Նախիջեւանում մօտ երեք ամիս ու ձեռնունայն վերադառն էջմիածին։ Ահա այդ ամիսների ընթացքում գալիս էին Խրիմեանին տեսնելու Ռուսաստանի եւ ատասահմանի զանազան տեղերից Հայեր ու օտարապդիներ։

Հոչակաւոր հայ նկարիչն էլ ուղեւրւում է Ն. Նախիջեւան Խրիմեանին հետ տեսնուելու համար. բայց կարի հարկէ (ինչպէս ինքը նկարիչը շուտով խոստովանեց) եւ այլ նպատակ. նոյն քաղաքում ապրում էին Մ. Նալբանդեանցի երկու ամենամտերիմ բարեկամներն ու նրա համալսարանական ընկերները՝ թժ. Յովհաննէս Բերբերեան եւ թժ. Անանիա Սուլթան - Շահ(*)։ Սրանց էին որ յիսունական թուականներից զեռ՝ համախմբուած էին «Հիւսուսափայլ»ի շուրջը, որանք էին որ 1861 թ. Մ. Նալբանդեանցի հետ միասին Պարիզում անմոռանալի օրեր անցկացրին, թժ. Յ. Բերբերեանն էր, որ ներկայ էր որպէս «Փկայ» Մ. Նալբանդեանցի թղթերի խուզարկութեան ու ձերբակալման ժամանակ, այդ երկու ընկերներն էին, որ 1863 թ. այցելեցին Մ. Նալբանդեանցին, երբ նա բանտարկուած էր հիւսիսային Պետրոս - Պօղոսեան քաղաքական բերգում. վերջապէս թժ. Ան. Սուլթան - Շահի մօտն էր գտնւում այն 18 նամակների կապոցը, որ գրել էր բանտից Մ. Նալբանդեանցը։

Շատ տարիներ առաջ նկարիչ Այվազովսքին այդ երկու հայ թժիշկների հետ ծանօթ է եղել. որոնք պատահել

էին նրա հետ Ղրիմում ու նկարիչը նըրանց հիւրասիրել էր իր ամառարանոցում. յիշում է նկարիչը որ մինչեւ իսկ նա նկարել էր այդ հիւրերին իր պարտէզի ծառի տակ նստած ու նկարն էլ նրանց նուիրել բայց յետագայում՝ Մ. Նալբանդեանցի մահից յետոյ մեղադրանքներ տեղացին Այվազովսքիների վրայ, բարեկամական յարաբերութիւնները խզուեցին եւ ահա քառորդ դար է որ նկարիչը ու այդ երկու թժիշկները իրարից խուսափում են ու չեն տեսնուում իրար հետ։

Եւ ահա ամենալաւ առիթն է դաւ Ն. Նախիջեւան Խրիմեանի տեսակցութեան եւ օգտուելով հանգամանքից տեսնել Մ. Նալբանդեանցի երկու ընկերներին ու նրանց հաղորդել այն պաշտօնական տուեալները որոնք միանգամընդ միշտ պէտք է լուսարանէին Մ. Նալբանդեանցի ձերբակալման բոլոր մութ ու անորոշ մնացած կողմերը։

Գալով Ն. Նախիջեւան, հոչակաւոր ծերունի նկարիչը շատ սիրալիր կերպով հիւրասիրուեց Խրիմեան Հայրիկի կողմից եւ նոյն օրն էլ նու պատահեց Խրիմեանի մօտ - թժ. Յ. Բերբերեանի եւ թժ. Ան. Սուլթան - Շահի հետ, որոնք համարեա ամէն օր այցելում էին Խրիմեանին։ Միս օրը հայ նկարիչը այցելեց թժ. Յ. Բերբերեանի ընտանիքը, իսկ երկու ժամ չանցած խնդրեց առանձնանալ երկու թժիշկների հետ կողքի սենեակում «մի շատ կարեւոր խնդրի առթիւ»։ Այդ ժամանակ ահա նկարիչը պատմում է մանրամասն՝ թէ ինչպէս տարիների ընթացքում ու մեծ դժուարութիւնների յաղթահարելով, նրան թոյլտութիւն են տուել «քրքրել» հին տարիների «քաղաքական յանցաւորների» «գոսիկ»ները, թէ ինչպէս նա իր «գաղտնի խորհրդական»ի տղնիւ խօսքն

(*) Թժ. Յովհ. Բերբերեանը - իմ հայրն է, իսկ թժ. Ան. Սուլթան - Նահը իմ մօրեղբայրն է. երկուսն էլ աշխատակցել են «Հիւսիսափայլ»ին ու «աշխարհաբանեան» պայքարին։ Ռ.Բ.

է առւել սեւէ բան հրատարակութեան չենթարկել եւ թէ ի՞նչպիսի կարեւոր փաստեր է գտել, որով մի կողմից պարզում են Մ. Նալբանդեանցի ձերբակարման իսկական պատճառները եւ միւս կողմից նոյնպէս պարզում է որ «Գարբիէլին մեղագրելը մեծ թիւրիմացութիւն է եղել...»։ Ու հայ նկարիչը հանելով զրապանից մի փոքրիկ յուշատերակ եւ ժամանակ առ ժամանակ մէջը նայելով, պատճում է հետեւեալը։

Երբ 1862 թ. յունիսի մէջ Մ. Նալբանդեանցը նոր էր վերադարձել Լոնտօնից եւ ուղեւորում էր իր հայրենի Ն. Նախիջևանը, նոյն այդ օրերը Ռուսաց սահմանը անցնելիս՝ ձերբակալում է մի ուստ երիտասարդ Վէթօչնիկով անունով, որի մօտ ոստիկանութիւնը գտնում է հոչակաւոր յեղափոխական Հեոցէնի եւ Բակունինի նամակները՝ ուղղուած Ռուսաստանի մէջ ապրող զանազան անձնաւորութիւններին։ Այդտեղից սկիզբ է անում այն քաղաքական հոչակաւոր «զործ»ը որը հետագայում պետական Ծերակոյտում քըննուեց «Լոնտօնի պրօպականտիսանների զործ» անուան տակ։ Ամբաստանեալների թւում գտնում էին Ռուսաստանի նշանաւոր ուստ հրապարակագիր Զեռնիշեւքի, մեծ անուն կրող վիպագիր Թուրքենեւ, Միք. Նալբանդեանց եւ ուրիշներ։ Զերբակալուած Վէթօչնիկովի մօտ գտնում են Բակունինի մի նամակը Մ. Նալբանդեանցին ուղղուած եւ որից երեւում է որ նամակագիրը եւ Նալբանդեանցը շատ մտերիմ բարեկամներ են։ Բակունին ինդրում է նրան տեսնուել Թուրքենեւի հետ եւ միասին «յաջողեցնել ինդիքքը»։ Այդ նամակում նոյնպէս Բակունին գրում է Նալբանդեանցին, որ ուղարկում է նրան «մի քանի

օրինակ խոհարարական զրքից»(*)։ Միւս նամակից երեւում է որ Մ. Նալբանդեանցը շատ մտերմօրէն կապուած է եղել նոյնպէս Հեոցէնի, ուստ տարագիր բանաստեղծ Օգառեօվի հետ, յեւ յեղափոխականների ու իշխան Զառթօռիժը շքի հետ։

Սակայն Վէթօչնիկովի ձերբակալումից յետոյ տաս օր չանցած՝ հետեւեալն է պատահում։ Աւատրիական ոստիկանութիւնը որ վաթսունական թրւականներին քաղաքական ոստիկանութեան գեր էր խաղում եւ լուպական պետութիւնների համար եւ իր գործունէութեամբ նրանց օգնում էր, իր սահմաններում ձերբակալում է մի ուստ երիտասարդ Նէջիփունիքո անունով, որ ուղեւորում էր նախ իտալական սահմանները ու յետոյ՝ Ռուսաստան։ Խուզարկութեան ժամանակ նրա մօտ գլունում են՝ 1) Բակունինի նամակը՝ ուղղուած հոչակաւոր իտալացի Գաուիրադիին եւ իտալական թոռոցիկներ, 2) Սլավ ազգերի քաղաքական ազատատագրութեան ծրագիր, որը նպատակ ունէր Բոհեմիայի, Մուավայի, Հունգարիայի, նոյնպէս եւ Տաճկաստանի սահմաններում գտնուող ոլաւների եւ միւս քրիստոնեանների ազատութիւնը; 3) Բակունինի այցեւումսը, ուստերէն գրուած՝ «յանձնել Պ. Նալբանդեանցին»՝ հետեւեալ բովանդակութեամբ։ «Հեոցէնից, Օգառեւից եւ ինձնից սրտագին ողջոյն խնդրում ենք ընդունել գրաբերիս՝ Պ. Նէջիփունիքոին որպէս մեր ընկերոջ, նրան կարող էք վերաբերուել,

(*) Ինչպէս շուտով պարզուեց սա Սիմէօն Մանիկեանցի (Մ. Նալբանդեանցի) «Երկրագործութիւնը որպէս ուղիղ հանապարհ» գիրքն էր՝ տպուած Փարիզ։

նոյն հաւատով, ինչպէս եւ մեզ»։ 4) Առանձին պաշտօնական նամակ Քրանս լեզուով Գառիբալդիի հասցէին, իսկ Ռուսաստանի մասին գրուած հետեւեալը. «Ռուսաստանը ընթանում է դէպի ի յեղափոխութիւն, մենք կը գործածենք ամեն բան, որ շտապեցնենք այն եւ միացնենք Եւրոպայի կենդանի ժողովուրդների շարժման հետ»։ Նամակի վերջում խօսում է Աւստրիոյ եւ Տաճկաստանի քաղաքական բռնութիւնների դէմ, ոլու ազգերի ընդհանուր դաշնակցութեան եւ համայն Մօտաւոր Արեւելքի ազատման մասին։ Բացի այդ՝ Նեչիփոռենքոի մօտ գտնում են եւ իտալացի Սաֆֆիի նամակը Գառիբալդիի քարտուղարի հասցէին եւ այլ թղթեր։ Աւստրիական ոստիկանութիւնը այդ բոլոր փաստաթուղթերը փութով յանձնում է իր հետպանի միջոցով ոռու ոստիկանութեան նախարարին։ Եւ սկսում է «գործ»։ Այդ բոլորը ի հարկէ բաւական էր, որ ոստիկանութիւնը խուզարկութեան ենթարկէր Մ. Նալբանդեանցի անձնական թղթերը, որոնց մէջ սակայն գըտնում են հետեւեալ կարեւոր նամակները։ Նախ Բակունինի նամակը, որտեղ հաղորդում է Նալբանդեանցին, որ «յատկապէս զրազուած է լին, ոռու եւ ոլու ազգերի հարցով, այդ նպատակով գնալու է նախ իտալիա, ապա եւ Տաճկաց սահմանները»։ Ապա գտել են «Մեղու»ի խմբագիր Յ. Սվաճեանի մի մեծ նամակը, որտեղ նա գրում է ծածկագիր բառերով ինչ որ «ընկերութեան», ինչ որ կիլիկիայում ուղարկուելիք «դասագրքերի» մասին, ինչ որ «Լոնտոնի գլխաւոր օթեակի» մասին, «որ մեզի պիտի օգնէ», «Տաւրոսէն հոս եկած արեղային հետ յարաբերութեան մէջ եմ, տուինք անոր փող» եւն. քողարկուած ակնարկներ ու պատրաստութիւններ

Տանկաց կառավարութեան դէմ։ Բացի այդ՝ ոռու կառավարութեան ձեռքն էր ընկել մի շատ կարեւոր ծածկագիր բառարան եւ որը գտնուել էր Մ. Նալբանդեանցի թղթերի մէջ։ Այդ բառարանը պայմանական նամակագրութեան համար էր պատրաստուած ու դրա մէջ ի միջի այլոց հետեւեալ բանալին ու բացատրութիւնները կային, օրինակ՝ դասագրքեր = զէնք, եւ կամ 1) բանալ վաճառականական տուն = համախմբել զօրք. 2) ունենալ բիւռո = կազմել մասնաձիւղ. 3) գտնել քարիւղ = լոնականների հետ գործել. 4) Եւրոպական քուռս = եւրոպ. պետութիւնների օգնութիւն. 5) Մանչեստրի բարեկամ = Անգլիա. 6) Ժընեւի բարեկամ = Իտալիա. 7) Փարիզի բարեկամ = իշլ. Չառթոնիժքի. 8) Հիւանդը = Հայաստան. 9) Լիվոռնոյի բարեկամ = Գառիրալդի. 10) Լոնտոնի բարեկամ = Հեռցէն. 11) Կտաւեղէն ապրանք = Կիլիկիա. 12) Ժամացոյց = զէնք. 13) Քոօնօմէթր = թնդանօթ. 14) Ալիւր - վասոգ. 15) Ռւզարկել ինտիգօ ներկը = աջակցի Անգլիային իր զօրքը Կիլիկիայի ամիերը իջեցնելու։

«Ահա այն տուեալները որոնց հիման վրայ Մ. Նալբանդեանցը ձերբակալուեց ու բանտարկուեց. վասն զի կառավարչական համոզմունքով Մ. Նալբանդեանցը «Եւրոպական Կոմիտէի» գլխաւոր անդամներէն մէկն էր, որոնց նախակն էր ապատամբութիւն պատրաստել ոլու եւ այլ քրիստոնեայ ժողովրդների մէջ Աւստրիոյ, Ռուսիոյ ու Տաճկաստանի կառավարութիւնների դէմ» բացատրում է նկարիչ Ալվազովսքին իր երկու ունկնդիրներին ու լուսում է. լուս էին եւ Ան. Սուլթան - Շահը եւ Յ. Բերբերեանը. ամենքը չափից դուրս յուղուած էին. ամենքի աչքի առաջ

պատկերանում էր Երեք տասնեակ տարիների անցած – գնացածը, Մ. Նալբանդեանցի խրոխտ ու վաղվառուն զլուխը, բարձր ու համարձակ ձայնը, աննկուն եռանդը, աղնիւ հայրենասիրութիւնը եւ լայն մարդկային գաղափարները, բանտը, աքսորը եւ մահը . . . : Յուղուած էր եւ հռչակաւոր հայ նկարիչը, որ վերջապէս կարողացաւ պարզել որ եթէ նրա եղրայրը Գարբիէլ Այվաղովսքին «զէշ բաներ ըրած է», ինչպէս ասում էր նկարիչը, «բայց եւ այնպէս պատճառ չէ եղած, որ Նալբանդեանցի պէս մեծ մարդը ասպարէզէն հեռացուի ու բանտի մէջ մեռնի»:

Այդ նոր ու կարեւոր բացատրութիւններից յետոյ նախկին Երեք բարեկամները, որ մի ժամանակ հեռացել էին իրարից – նորէն մտերմութեան պահանջ են զգում: Նկարիչ Այվաղովսքին ուրախ էր որ թօթափեց իր ուսերից բարոյական ծանր մեղադրանքը (Եղրօր վերաբերմամբ), մնում է մի քանի օր Ն. Նախիջեւանում եւ ամեն օր տեսնում Մ. Նալբանդեանցի երկու ընկերների հետ: Վճռուած էր համաձայն Այվաղովսքութ ցանկութեան «նոր տուեալների» մասին ոչինչ չհրատարակել, քանի ինքը Այվաղովսքին կենդանի է: Բժ. Ան. Սուլթան – Շահը ըստ իր վաղեմի սովորութեան այս տեսակցութիւնը Այ-

վաղովսքու հետ ու սրա պատմածը գրել էր առել իր «Աւրախ եւ տխուր օրերի տետրակօռում եւ որը մենք զանաք նրա մահից յետոյ, թէեւ անձամբ եւս արդէն մեզ մանրամասն պատմել էր եւ այդ մասին եւ շատ ուրիշ իր կեանքում պատահած խոշոր հայ ազգային դէպքերի ու գէմքերի մասին»:

Տաս տարի չէր անցել, երբ 1905 թւ-ւականներին ոռուս գրաքննչական կտապանքները մեծ շափով թուլացել էին եւ ոռուս պատմական հանդէսներում արդէն կարելի էր գրել վաթուռնական թոււականների «Լոնտոնի պրօտպականդիսանների մեծ գործ»ի մասին: Այդ ժամանակ ի միջի այլոց եւ լոյս տեսան ոռուերէն լեզուով Բակունինի նամակները ուղղուած Մ. Նալբանդեանցին եւ ակնարկներ որա Լոնտոնի «Եւրոպական Կոմիտէի» հետ ունեցած յարաբերութիւնների մասին»:

Անշուշտ այդ պատմական մեծ ժամանակաշրջանը (յիսունական – վաթուռնական թոււականները) շատ հետաքրքրական է, բեղուն եւ նշանակալից մեր ազգային – քաղաքական մտքի զարգացման տեսակետից: զժրադարար, շատ քիչ է ուսումնասիրուած այդ ըլջանը:

ՈՌԻԲԵՆ ԲԵՐԲԵՐԵԱՆ

Փարփակ